

**ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՒԱՇԽԱՐՅԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ
ՀՆԷԱՎԱԽՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՆԷԱԷԿՈԼՈԳԻԱՆ
ԽՈՒՂԱՎԵՐՈՅԱՆ Ա.ՅՈՒ.**

Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, Հայաստան

Սույն աշխատանքում իրականացված է Հայաստանի տարբեր դարաշրջանների հուշարձաններից հայտնաբերված հնադարյան մարդկանց մարդաբանական և ախտաբանական նյութերի համալիր ուսումնասիրությունը: Աշխատանքում իմի են բերված Հայաստանի բնակչությանը վերաբերող հիմնական մարդաբանական տվյալները՝ վաղ բրոնզե դարից միջև XX դարը: Օրինակներ են բերվում մարդաբանական գիտության տարբեր բնագավառների ուսումնասիրություններից: Ժամանակագրական առումով դասակարգված խմբերը նկատելի տարբերություն չեն ցուցաբերում: Հայտնաբերված է, դարաշրջանների ընթացքում, բնակչության ժառանգական հաջորդականությունը: Ատամային համակարգի հայկական տարբերակում առավելագույն կերպով արտահայտված է հարավային գրացիլ տիպի արևմտյան ենթատիպի տարրերը:

Մարդկանց կազմաբնախոսական տիպարը, զարգացման ընթացքը և ծերացումը հանդիսանում են խճճված կապակցություն, ժառանգական և ձերբբերովի առանձնահատկությունների համադրում: Բայց, նույնիսկ, ժառանգական առանձնահատկությունները և նրանց արտահայտվածությունը պայմանավորված է՝ կախված արտաքին միջավայրի ազդեցությունից, աշխատանքի և կենցաղի պայմաններից, կրած հիվանդություններից և այլ պատճառներից:

Մեզ հնարավորություն է ընձեռված ուսումնասիրել ոսկրաբանական հավաքածուները, որոնց հետազոտումը չափազանց ուսանելի է ախտաբանական պրոցեսների բացահայտման և կազմվածքի ադապտացիոն փոփոխատուցման (կոմպենսացիոն) փոփոխումների բացահայտման համար: Դրա հետ մեկտեղ աշխատանքում պարզորոշ կերպով ներկայացված է տարբեր դարաշրջանների բնակչության հնարավոր հիվանդությունների առաջացման պատճառները: Թերի, չհաշվեկշռված սնունդը, հնադարյան մարդկանց մոտ հանգեցրել է ատամնաձևոտային ախտաբանության բարձր հաճախականության:

Հայաստանի տեղական բնակչության շրջանում հայտնաբերվել են բազմաբնույթ վնասվածքների հետքեր: Դրանք մեծ հետաքրքրություն են ներկայացնում, ուստի նկարագրված է առանձնահատուկ ուշադրությամբ:

OFFICIAL PUBLICATION OF THE YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY